Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի 2007թ. փետրվարի 6-ի նիստում

ԵՊՀ ռեկտոր Ա.Հ. Սիմոնյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետև՝ ՏՏ) կրթական և հետազոտական կենտրոնը (այսուհետև՝ Կենտրոն) Երևանի պետական համալսարանի (այսուհետև՝ ԵՊՀ) ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և ԵՊՀ կանոնադրության ու սույն կանոնադրության հիման վրա:

1.2. Կենտրոնը վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ՝ ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

1.3. Սույն կանոնադրությունը լրացվում կամ փոփոխվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

1.4. Կենտրոնի հասցեն է՝ ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:

1.5. Կենտրոնն ունի սեփական անվանումով կնիք, դրոշմակնիք և ձևաթերթ:

2. Խնդիրներն ու գործառույթները

2.1. Կենտրոնի խնդիրներն են՝

2.1.1. ՏՏ-ների դերում կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացում,

2.1.2. ՏՏ-ների բնագավառում գիտահետազոտական աշխատանքների կատարում,

2.1.3. համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման տեղեկատվական համակարգերի մշակում ու ներդնում:

2.2. Կենտրոնի գործառույթներն են՝

2.2.1. բակալավրիատում ոչ մասնագիտական ֆակուլտետների համապատասխան ընդհանուր կրթական դասընթացի, ինչպես նաև ֆակուլտետների պատվերով առանձին դասընթացների ապահովում,

2.2.2. մագիստրատուրայում հատուկ կրթական ծրագրերի (միջբուհական, միջմասնագիտական և այլն) և ԵՊՀ ֆակուլտետների կողմից չիրականացվող կրթական ծրագրերի իրականացում,

2.2.3. մագիստրատուրայում ֆակուլտետների պատվերով առանձին դասընթացների ապահովում,

2.2.4 լրացուցիչ և շարունակական կրթության (որակավորման բարձրացում, մասնագիտական վերապատրաստում և այլն) իրականացում,

2.2.5. ՏՏ-ների բնագավառում (այդ թվում կրթական համակարգերում կիրառվող) հետազոտական դրամաշնորհների կամ հատուկ նպատակային ծրագրերի շրջանակներում գիտահետազոտական աշխատանքների կատարում,

2.2.6. ԵՊՀ էլեկտրոնային կառավարման ներկառուցվածքի նախագծում, իրականացում, ներդնում, սպասարկում և զարգացում,

2.2.7. ԵՊՀ փաստաթղթային շրջանառությունը կարգավորող միասնական տեղեկատվական համակարգերի նախագծում, ներդնում և սպասարկում,

2.2.8. գիտելիքների գնահատման միասնական վարկանիշային կարգի, ուսանողների ակադեմիական տվյալների գրանցումն ու մշակումն ապահովող տեղեկատվական համակարգերի նախագծում, ներդնում և սպասարկում,

2.2.9. ԵՊՀ-ում ՏՏ-ների ներդրման և կիրառման հետ կապված այլ ծրագրերի իրականացում:

3. Կառուցվածքն ու կառավարումը

3.1. Կենտրոնն ենթարկվում է ԵՊՀ ռեկտորին:

3.2. Կենտրոնը կազմված է՝

ա) ուսումնահետազոտական միավորներից, այդ թվում՝ համահամալսարանական ամբիոններից, լաբորատորիաներից,

բ) ԵՊՀ տեղեկատվական ներկառուցվածքի մշակման, ներդրման և շահագործման միավորներից:

Կենտրոնի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ԵՊՀ ռեկտորը:

3.3. Կենտրոնի աշխատանքը ղեկավարում են գիտական ղեկավարը և գործադիր տնօրենը, որոնց նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ռեկտորը: Կենտրոնի ղեկավարության հետ ԵՊՀ ռեկտորը կնքում է աշխատանքային պայմանագրեր, որոնք հիմք են հանդիսանում նրանց հրամանագրելու համար:

3.4. Կենտրոնի գիտական ղեկավարը իրականացնում է Կենտրոնի կրթական և հետազոտական ծրագրերի ղեկավարումը, կառուցվածքային ստորաբաժանումների գիտա- և ուսումնամեթոդական ղեկավարումը և համակարգումը:

3.5. Կենտրոնի գործադիր տնօրենը իրականացնում է Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումներում վարչական աշխատանքի և ԵՊՀ տեղեկատվական ներկառուցվածքի մշակման, ներդրման և շահագործման ղեկավարումը:

3.6. Կենտրոնի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Կենտրոնի աշխատանքների որակի և խնդիրների ու գործառույթների պատշաճ կատարման համար: